Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
փետրվարի 20 -ի N 92 - Ա որոշման

«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Ջերմիկ անկյուն խմբային տների» ծրագրի նպատակն է՝ միայնակ, խնամքի կարիք ունեցող, մտավոր հաշմանդամների կենսապահովման նվազագույն պայմանների և կացարանի ապահովումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում ՀՀ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ջերմիկ անկյան բարեկամներ» ինկորպորացիա, հասցե՝ ԱՄՆ, 1037, Արիզոնա 85280
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն իրականացվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն , ՀՎՀՀ 01242562
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվում է Հայաստանում՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն, Կոտայքի մարզ, գյուղ Առինջ 20 փ. 6 տուն և Արարատի մարզ, համայնք Գեղանիստ, 27 փող., 23/1 տուն հասցեներում, բնագավառը՝ սոցիալական:

6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 5,857,648 (հինգ միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր քառասունութ) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
7.	Բարեգործություն ստացողը	1) «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրները ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձիք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 14 երիտասարդներ (5 տղա և 9 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 և Փարաքարի թիվ 2 կրթահամալիրներից: 2) «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Կոտայքի մարզի գյուղ Առինջ 20 փ. 6 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրները ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձիք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 8 երիտասարդներ (4 տղա և 4 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 կրթահամալիրից:

		3) «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Արարատի մարզի, համայնք Գեղանիստ, 27 փող., 23/1 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրները ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձիք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 8 աղջիկ, որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 կրթահամալիրից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 01 հունվար 2020թ. – 31 դեկտեմբեր 2020թ. (շարունակելի):
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1տուն հասցեում, գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1638369 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր վաթսունինն) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) որից՝ գազ – 1012000 դրամ, ջուր – 165356դրամ, էլեկտրաէներգիա – 345523դրամ, հեռախոսակապ – 84000դրամ, գազի սպասարկում – 31490դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 01.01.2020-31.12.2020 թթ. ընկած ժամանակահատվածի ընթացքում: «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Կոտայքի մարզի գյուղ Առինջ 20 փ. 6 տուն հասցեում, գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1522879 (մեկ միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար ութ հարյուր յոթանասունինն) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) որից՝ գազ – 1012000 դրամ, ջուր – 165356դրամ, էլեկտրաէներգիա – 345523դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 01.01.2020-31.12.2020 թթ. ընկած ժամանակահատվածի ընթացքում: «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Արարատի մարզի, համայնք Գեղանիստ, 27 փող., 23/1 տուն հասցեում, գործունեության շրջանակներում նախատեսված է տան բնակիչների կարիքների ապահովման համար մինչև 7 տեղանոց ավտոմեքենայի (Honda Elysion RR11021929) ներմուծում: Ավտոմեքենայի գինը կազմում է 2,696,400 (երկու միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր) դրամ (5,600 ԱՄՆ-ի դոլար): Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 01.01.2020-31.12.2020 թթ. ընկած ժամանակահատվածի ընթացքում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակնկալվում է հարկային արտոնություն ստանալ հետևյալ գործարքների մասով՝

	համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Պայմանագրեր կնքված գազի մատակարարման (07.07.2013թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9200 խ.մ. (1012000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրոէներգիայի մատակարարման (03.12.2014թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9817 կվտ.ժ. (345523 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), հեռախոսակապի ծառայությունների մատակարարման (20.02.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 84000 դրամ՝ առանց ԱԱՀ –ի, ջրի մատակարարման (25.11.2017թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1140խ.մ. (165356դրամ՝ առանց ԱԱՀ-ի) և գազի սպասարկման (06.10.2018թ. - 3 տարի ժամկետով), որի տարեկան ծախսը կազմում է 31 490 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: 2) Պայմանագրեր կնքված գազի մատակարարման (21.06.2018թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9200 խ.մ. (1012000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրոէներգիայի մատակարարման (28.06.2018թ. -անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9817 կվտ.ժ. (345523 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) և ջրի մատակարարման (10.12.2018թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1140խ.մ. (165356 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) ծառայությունների հետ: 3) Honda Elysion մակնիշի (VIN՝ RR11021929) ավտոմեքենայի ներմուծում և մաքսազերծվում. (Invoice LTD «JP INTERNEISHENAL» Tbilisi-Rustavi, 18.01.2020), որի արժեքը կազմում է 2,696,400 (երկու միլիոն վեց հարյուր ինսունվեց հազար չորս հարյուր) դրամ (5,600 ԱՄՆ-ի դոլար)
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմա-կերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևան քաղաքի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Կոտայքի մազպետարանի, Առինջ համայնքի վարչական շրջանի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ: Ինչպես նաև նախատեսվում է համագործակցություն սոցիալական աջակցության տարածքային մարմինների հետ՝ շահառուների ընտրության շրջանակներում:
13.	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկողության մեխա-նիզմների նկարագրությունը	«Ջերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար և նաև իրենց պահանջով հաշվետվություն է ներկայացնում բարեգործին: ՀՀ կառավարության 2003թ.-ի հունվարի 16–ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ